# ՏԵՂԵԿԱՆՔ

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻԼԻԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չիլիի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին» համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի ապրիլի 27-ին, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի կողմից:

Համաձայնագրով Կողմերից որևէ մեկի տրամադրած՝ դիվանագիտական և պաշտոնական վավեր անձնագրեր ունեցող անձինք կարող են մուտք գործել մյուս Կողմի պետության տարածք և մնալ այնտեղ մուտքի օրվանից հետո իննսուն օրը չգերազանցող ժամկետով՝ առանց մուտքի արտոնագիր ստանալու անհրաժեշտության:

Կողմերից որևէ մեկի տրամադրած՝ դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձինք, ովքեր գործուղվել են մյուս Կողմի պետության տարածքում գործող դիվանագիտական ներկայացուցչություններ կամ հյուպատոսական հիմնարկներ, ինչպես նաև նման անձնագրեր ունեցող՝ նրանց ընտանիքների անդամները կարող են իրենց գործուղման ընթացքում առանց մուտքի արտոնագրի մուտք գործել մյուս Կողմի պետության տարածք, տարանցել մյուս Կողմի պետության տարածքով, մնալ մյուս Կողմի պետության տարածքում, դուրս գալ մյուս Կողմի պետության տարածքից և կրկին մուտք գործել մյուս Կողմի պետության տարածք:

Յուրաքանչյուր Կողմ իրեն իրավունք է վերապահում չթույլատրելու իր պետության տարածք մտնելը կամ չեղյալ հայտարարելու մնալու թույլտվությունը, եթե տվյալ անձը, ով փորձում է մուտք գործել կամ մնալ, հայտարարվում է անցանկալի անձ («persona non-grata»)՝ առանց հայտնելու դրա պատճառները:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը հայտնել է, համաձայնագրով Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն:

Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը ենթակա պետական գույքի կառավարման կոմիտեն հայտնել է, որ Համաձայնագրում Հայաստանի Հանրապետության համար գույքային պարտավորություններ նախատեսող դրույթներ առկա չեն:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը

հայտնել է, որ Համաձայնագիրը չի պարունակում Հայաստանի Հանրապետության օրենքին հակասող, օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում նախատեսող նորմեր և միաժամանակ գտնում է, որ Համաձայնագրում վավերացման ենթակա դարձնող հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը նպատակահարմար է համարում Համաձայնագրի հաստատումը Հանրապետության Նախագահի կողմից:

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

**ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻԼԻԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայ-չիլիական հարաբերությունները վերջին տարիներին համաչափ և բնականոն հունով զարգացում են ապրել: 2014 թվականին Չիլիի Հանրապետություն պաշտոնական այց է կատարել Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը, որի շրջանակներում ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության և Չիլիի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջև համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր: 2015թ. ապրիլի 14-ին Չիլիի Կոնգրեսի պատգամավորների պալատն ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև:

2016թ. մայիսին Չիլիի Կոնգրեսի պատգամավորների պալատն ընդունեց բանաձև, որը դատապարտում էր ապրիլի 1-2-ը Լեռնային Ղարաբաղի բնակչության դեմ իրագործված ադրբեջանական ագրեսիան և կոչ անում դադարեցնել այն:

Հայաստանի և Չիլիի միջև հարաբերությունները ներկայումս շարունակում են զարգանալ համագործակցային և բարեկամական ոգով:

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չիլիի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին» համաձայնագրի հաստատման արդյունքում Չիլիի Հանրապետության հետ հարաբերություններում ակնկալվում է առավել սերտ համագործակցության ծավալում, բարձրաստիճան փոխայցելությունների ակտիվացում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2018 թվականի ապրիլի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չիլիի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին» համաձայնագրի հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

**ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ** **ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻԼԻԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՊԱՀԱՆՋԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018 թվականի ապրիլի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չիլիի Հանրապետության Կառավարության միջև դիվանագիտական և պաշտոնական անձնագրեր ունեցող անձանց համար մուտքի արտոնագրի պահանջի վերացման մասին» համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից երեսուն օր լրանալուց հետո:

2019թ. ապրիլի 12-ի դրությամբ՝ չիլիական կողմից չի ստացվել ծանուցում՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար նախատեսված ներպետական ընթացակարգերի կատարման մասին:

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԳՐԻԳՈՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ